ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՈՒԳՈՐՅԱՆ

«22» 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000003

Ձեռնարկողը՝ ***«Սի Էս Սի» ՍՊԸ***
Ք. Երևան, Նալբանդյան 7/1 բն.66

Գործունեությունը՝ ***Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի «Աջի-Յալ» տեղամասի բացահանքից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0000003

«22» 01 2020թ.

Տավուշի մարզի Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի «Աջի-Յալ» տեղամասի բացահանքից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Սի Էս Սի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Նկարագրական մաս.Հայցվող տարածքը գտնվում է Տավուշի մարզի Իջևանի շրջանում, Հաղարծին գյուղից 4.5 կմ հյուսիս:

Կոնգլոմերատների պաշարները առաջին անգամ հաստատվել է 1930թ. ՊՊՀ-ի կողմից (արձանագրություն թիվ 86) 56.0հազ.մ^3 քանակով, ըստ A_2 և B կարգերով:

Որոնողական և լեռնահետախուզական աշխատանքները կատարվել են 1968-1969թթ. ՀՍՍՀ –ի շինանյութերի նախարարության հայտի հիման վրա (1967թ. հուլիսի 3-ի, N 313/3640): Աշխատանքների արդյունքում ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից հաստատվել են հանքավայրի «Աջի–Յալ» տեղամասի պաշարները (1970 թվականի օգոստոսի 19-ի թիվ 6028 արձանագրությոուն, **B** - կարգով՝ 218.0հազ.մ^3 քանակով):

Բլոկների ելքը լեռնային զանգվածից ընդունվել է 18%, սալիկների ելքը՝ 14.9 մ^2/մ^3: Հանքավայրի պաշարները՝ իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով լիովին համապատասխանում են 9479-69և 9480-69 ԳՈՍՏ-երին և կարող են օգտագործվել շինարարության մեջ որպես հումք շենքերի ներքին հարդարման աշխատանքների համար, իսկ արտադրական թափոնները՝ որպես դեկորատիվ շինանյութ:

Նախատեսվող գործունեության տեղամասի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

1.	X_1 = 4519078	Y_1 = 8495861	7.	X_7 =4519232	Y_7 = 8495935
2.	X_2 =4519151	Y_2 = 8495847	8.	X_8 =4519184	Y_8 = 8495941
3.	X_3 =4519178	Y_3 = 8495865	9.	X_9 =4519136	Y_9 = 8495941
4.	X_4 =4519192	Y_4 = 8495867	10.	X_{10} =4519109	Y_{10} = 8495909
5.	X_5 =4519212	Y_5 = 8495862	11.	X_{11} =4519069	Y_{11} = 8495892
6.	X_6 =4519237	Y_6 = 8495871			

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
RA YEREVAN ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER STATE NON-COMMERCIAL ORGANIZATION
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION OF EXPERTS

Տավուշի մարզի Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի «Աջի-Յալ» տեղամասի բացահանքի սահմաններում գունավոր կոնգլոմերատների մնացորդային պաշարների քանակը կազմում է 208386մ3, B կարգով:

Տարեկան արտադրողականությունը՝ 4167.72մ³ մարվող պաշար: Գործողության ժամկետն է 50 տարի: Բլոկների միջին ելքը կազմում է՝ 18.0%:

Հանույթը իրականացվելու է հորատասեպային եղանակով:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Նշված պայմաններով կառուցված բացահանքերը ունի հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը՝ 240մ,
- Ամենամեծ լայնությունը՝ 110,
- Ամենամեծ խորությունը՝ 57.5մ:

Բացահանքերի օտարման տարածքը՝ 1.64հա:

Բացահանքում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարները կազմում են 208386մ³, կորզվող գունավոր կոնգլոմերատներ՝ 194250մ³: Մակաբացման ապարները միասին՝ կազմում են 13550մ³:

Բացահանքը շահագործելիս առաջանում են կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերի բնամասերում՝ 13340մ³ (6.4%) և շահագործական կորուստներ՝ 796 մ³ (0.38%): Ընդամենը կորուստները կազմում են 14136խմ (6.78%):

Բացահանքի բացումը կատարվելու է բացահանքի հյուսիսային մասից բացման առաջին 1685.0մ բարձրության հորիզոնից: Բացահանքի հարավային՝ 1625.0մ բարձրության նիշից կառուցվում է ավտոճանապարհ դեպի 1685մ բացման հորիզոն՝ 694մ երկարությամբ, 8մ լայնությամբ, որի ամենամեծ թեքությունը՝ 110.17‰ է: Հաջորդ հորզոնները 1682.5մ-1640.0մ հորիզոնը ևս մշակվելու է այդ ավտոճանապարհից, որի ընթացքում ամենամեծ թեքությունն է 92.8‰: Իսկ 1640մ-1625մ բարձրության հորիզոնները մշակվելու է բացահանքի հարավային մասից կտրող խրամի միջոցով:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են ՝

- հանքաստիճանի բարձրությունը – 2.5 մ;
- անվտանգության բերմայի լայնությունը – 1.0 մ;
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90⁰;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Մակաբացման ապարները ներկայացված են 0.2մ հզորությամբ 1650մ³ հողաբուսական շերտով, և 11900մ³ ծավալով 0.2-2.5մ հզորությամբ կավաավազների հետ խառը կոնգլմերատների հողմնահարված ապարների կտորներով:

Մակաբացման ապարները տեղամասից Д3-110 բուլդոզերի օգնությամբ, հավաքվում են և ավտոինքնաթափով տեղավորվում N1 և N2 ժամանակավոր լցակույտ և պահեստավորվում: N1 լցակույտը հողաբուսական շերտի լցակույտն է, N2–ը կավաավազների հետ խառը հողմնահարված, ջարդոտված կոնգլոմերատների լցակույտը:

Շահագործման 32-րդ տարվանից սկսած N1 և N2 ժամանակավոր լցակույտի մակաբացման ապարները աստիճանաբար կտեղափոխվեն և կլցվեն արդյունահանված տարածքների վրա 1.1մ բարձրությամբ և կհարթեցվեն: Կստեղծվեն ներքին լցակույտեր:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին բուլդոզերային լցակույտաառաջացում:

Շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում: 1630մ բարձրության հանքաստիճանների վրա կտեղափոխվի լցակույտում

մնացած մասը՝ 1470մ³ ծավալը, կտեղափոխվի 1630մ բարձրության 1.1մ բարձրությամբ և կհարթեցվի:

Լցակույտի միջին բարձրությունն է 7.5մ, որի թեքության a=35⁰-ի դեպքում՝ զբաղեցրած մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 1985մ² և 370մ² մակերես: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Հանույթից առաջացած արտադրական թափոնները, որոնք իրենցից ներկայացնում են կոնգլոմերատի կտորներ՝ 159285մ³ ծավալով բացահանքի շահագործման տարիներին բարձվելու են КрАЗ-256Б մակնիշի ավտոինքնաթափերը և տեղափոխվում արտադրամաս դեկորատիվ արտադրանքի ստացման համար:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է հորատման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է КО-002 մակնիշի ջրցան-լվացող մեքենայով: Նույն մեքենայով կարելի է ջուրը մղել լողանալու նպատակով տեղադրված ջրցողարանի բաքը: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ШН-БЦБ -1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Հարթեցումը կկատարվի բացահանքերի ողջ մակերեսով՝ 12800մ², ինչպես նաև արտադրական հրապարակը 250մ², ավտոճանապարհները՝ 3375մ², ինչպես նաև նախկինում տեղադրված արտաքին լցակույտի մակերեսը՝ 2355մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 18780մ²: Հարթեցումը կատարվում է ДЗ- 170.1 բուլդոզերի օգնությամբ:

Ռեկուլտիվացման աշխատանքների համար նախատեսված է 1408.2 հազ. ՀՀ դրամ:

Իրականացվել է վնասակար նյութերի արտանետումների կոնցենտրացիաների հաշվարկներ՝ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված ''վտանգավոր քամու արագության'' ցուցանիշով, ինչի համաձայն վնասակար նյութերի արտանետումների կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմայի սահմաններում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- թափոնների կառավարում,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում,
- աշխատանքների ժամանակ փոշեդադարեցում, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրում:
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով,
- կուտակված հողաբուսական շերտի թմբերին բազմամյա ճիմանաջացնող բույսերի ցանքի կատարում՝ հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում կիրառելու նպատակով:

Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ մեկ անգամ եռամսյակներ ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

2.նավթամթերքներով արտադրական հրապարակի հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ ,

3,հանքավայրից մոտ 60մ հեռավորության վրա գտնվող սողանքային մարմնի գեոդեզիական վերգետնյա չափագրումների իրականացում (նիվելիրացում և պոլիգոնոմետրիա)՝ ժամանակին մարմինների հորիզոնական և ուղղաձիգ տեղաշարժերը բացահայտելու նպատակով: Չափագրումները կկատարվեն տարեկան մեկ անգամ հաճախականությամբ: Յուրաքանչյուր ամիս կկատարվի սողանքային մարմինների ակնադիտական զննություն՝ մակերևույթին ճեղքերի առաջացման, աղբյուրների ելքերի արձանագրման նպատակով :

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի տարածքում արգելվում է հանքագործական արդյունաբերությունը, բացառությամբ կավի, ճենակավի, ածխաթթվային և ստորերկրյա հանքային ջրերի:

Տվյալ կարգավորման տակ ընկնելու վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով շրջակա միջավայրի նախարարությունը փորձաքննական գործընթացում դիմել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, արդարադատության, էկոնոմիկայի նախարարություններ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից փորձաքննության հիմնական փուլում տրամադրված պարզաբանումների /2019թ. նոյեմբերի 18-ի N01/29.1ԱԱ/20332 և դեկտեմբերի 27-ին N01/21.2/25280 գրություններ/ համաձայն վերոնշյալ տեղամասը ներկայումս ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված չէ: Միաժամանակ նախարարությունը նշել է, որ համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նշված տարածքներում հանքավայրերի /բացառությամբ կավի, ճենակավի, ածխաթթվային և ստորերկրյա հանքային ջրերի/ շահագործման նպատակով նոր ընդերքօգտագործման թույլտվություն տրամադրելն արգելվում է:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Վերը նշված հիմնավորմամբ «Սի Էս Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Կույբիշևի գունավոր կոնցենտրատների հանքավայրի «Աջի-Յալ» տեղամասի բացահանքից արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Գլխ. մասնագետ՝ Զ. Զուռնաչյան